ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ

Հավելված № 1
Հաստատված է
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Վարչության նախագահի
2023 թվականի փետրվարի 20-ի N 25-Լ կարգադրությամբ

«ԱՅԴԻ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՎԱՐԿԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Պատասխանատու ստորաբաժանումներ	Իրավաբանական վարչություն
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	01/04/2023
Տարածումը	Բանկի բոլոր ստորաբաժանումներ
Այլ դրույթներ	
Առնչվող փաստաթղթեր	

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ 3
2. ՎԱՐԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ 4
3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 12
4. «ՎԱՐԿԱՅԻՆ ԴԱԴԱՐ» ԾՐԱԳԻՐ 13
5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ 14
6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ 14
7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ 15
8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ 15

1. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1.1 ***«Բանկ»***՝ «ԱյԴի Բանկ» ՓԲԸ,

1.2 ***«Վարկառու»***՝ Բանկի հետ վարկային պայմանագիր կնքած կամ այդպիսի պայմանագիր կնքելու մտադրություն հայտնած անձ, այդ թվում՝ Համավարկառու,

1.3 ***«Համարվարկառու»***՝ Վարկառուի հետ միասին Բանկի հետ վարկային պայմանագիր կնքած կամ այդպիսի պայմանագիր կնքելու մտադրություն հայտնած անձ:

1.4 ***«Կողմեր»***՝ վարկային պայմանագրի կողմերը,

1.5 ***«Գլխավոր վարկային պայմանագիր»***՝ Բանկի և Վարկառուի միջև կնքված պայմանագիր, որով Բանկն իր պատրաստակամությունն է հայտնում Վարկառուին՝ դրա շրջանակներում, հատկացնել հաջորդող կամ զուգորդող վարկեր, վարկային գծեր և տրամադրել վարկային այլ գործիքներ,

1.6 ***«Գրավի պայմանագիր»***՝ Բանկի և Գրավատուի միջև ի ապահովումն ***Գլխավոր վարկային պայմանագրով սահմանված*** պարտավորությունների կատարման կնքված պայմանագիր,

1.7 ***«Երաշխավորության պայմանագիր»***՝ Բանկի և Երաշխավորի միջև ի ապահովումն ***Գլխավոր վարկային պայմանագրով*** սահմանված պարտավորությունների կնքված պայմանագիր,

1.8 ***«Ապահովման միջոցի պայմանագիր»***՝ Գրավի և Երաշխավորության պայմանագրերը միասին,

1.9 ***«Գրավատու»***՝ Գրավի պայմանագիր կնքած անձ,

1.10 ***«Երաշխավոր»***՝ Երաշխավորության պայմանագիր կնքած անձ,

1.11 ***«Վարկային պայմանագիր կամ Պայմանագիր»***՝ Բանկի և Վարկառուի միջև սույն պայմանների պահպանմամբ կնքված պայմանագիր՝ օֆերտայի և ակցեպտի միջոցով,

1.12 ***«Դիմում-օֆերտա»***՝ Պայմանագիր կնքելու համար Վարկառուի կողմից ներկայացված՝ վարկ ստանալու վերաբերյալ դիմում, որը Բանկի կողմից ակցեպտավորվելով, Բանկի և օֆերտա ներկայացրած անձի միջև ծագում են վարկային իրավահարաբերություններ, և վարկային պայմանագիրը համարվում է կնքված,

1.13 ***«Վարկի տրամադրման ակցեպտ»***՝ Պայմանագիր կնքելու նպատակով Վարկառուի ներկայացված Դիմում-օֆերտայի ընդունման վերաբերյալ Բանկի կողմից տրամադրված հավաստում, որը Դիմում-օֆերտայի հետ միասին կազմում է Վարկային պայմանագիր,

1.14 ***«Վարկ»***՝ Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում Վարկառուի կողմից դիմում-օֆերտայի հիման վրա տրամադրվող վարկ /այդ թվում՝ վարկային գիծ/, բացառությամբ՝ «Բնակարանային հիփոթեքային կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի իմաստով հիփոթեքային վարկը, ոսկու գրավադրմամբ սպառողական վարկը,

1.15 ***«Վարկավորման պայմաններ»***՝ Բանկի կողմից հաստատված և հրապարակված վարկի տրամադրման և սպասարկման պայմաններ, այդ թվում՝ փաթեթներ և դրանց փոփոխություններ /տեղեկատվական ամփոփագրեր/: Համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները հանդիսանում են կնքված Վարկային պայմանագրի անբաժանելի մաս,

1.16 ***«Վարկային հաշիվ»***՝ Վարկառուին վարկի տրամադրման և հաշվառման նպատակով Բանկի կողմից Վարկառուի անունով բացվող կամ արդեն բացված հաշիվ,

1.17 ***«Սպառողական վարկ»***՝ Սպառողական վարկ համաձայն «Սպառողական կրեդիտավորման մասին» ՀՀ օրենքի:

1.18 ***«ԱԲՀՏ»***՝ «ԱյԴի Բանկ» ՓԲ Ընկերության հաշվարկային տոկոսադրույքը փոփոխական մեծություն է, որն ուժի մեջ է մտնում այն՝ Բանկի պաշտոնական կայքէջում (www.idbank.am) հրապարակելուց 30 օրացուցային օր հետո: (ԱԲՀՏ), հաշվարկման մեթոդաբանությունը, ինչպես նաև փոփոխման հաճախականությունը հրապարակված են Վարկատուի պաշտոնական ինտերնետային կայքէջում (https://www.idbank.am/retail/IDBank-reference-rate-ibrr/):

2. ՎԱՐԿԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Վարկային պայմանագրի կնքման կարգ և վարկի սպասարկման պայմաններ

2.1.1. Գլխավոր վարկային պայմանագրի կողմ հանդիսացող Վարկառուն Բանկին ներկայացնում է Դիմում-օֆերտա Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում վարկ ստանալու նպատակով: Բանկի կողմից Դիմում-օֆերտան ընդունվում է /ակցեպտավորվում է/ և Վարկային պայմանագիրը համարվում է կնքված Բանկի կողմից Վարկի տրամադրման ակցեպտը /այդ թվում՝ դրան կից և անբաժանելի հավելվածները/ Վարկառուի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու օրվա ավարտին կամ Վարկառուի կողմից որևէ ձևով Վարկի տրամադրման ակցեպտից հրաժարվելու ուղղված գործողություններ չկատարելու միջոցով: Ընդ որում, եթե Բանկի կողմից տրամադրված Վարկի տրամադրման ակցեպտի պայմանները տարբերվում են Դիմում-Օֆերտայով ներկայացված վարկի պայմաններից, սակայն Վարկառուն օգտագործում է իր հաշվին փոխանցված Վարկի գումարը կամ դրա մի մասը կամ Վարկի տրամադրման ակցեպտից հրաժարավելուն ուղղված գործողություններ չի կատարում, ապա Կողմերն ընդունում են, որ Վարկառուն տալիս է իր համաձայնությունը Վարկի տրամադրման ակցեպտով նախատեսված պայմաններին և Վարկային պայմանագիրը համարվում է կնքված այդ պայմաններով: Սույն կետով սահմանված կարգով կնքված Վարկային պայմանագիրը ներառում է Վարկառուի ներկայացրած Դիմում-օֆերտան, Վարկի տրամադրման ակցեպտը, սույն կանոնները և համապատասխան վարկատեսակի Վարկավորման պայմանները, իսկ Վարկավորման պայմաններով կամ սույն կանոններով նախատեսված լինելու դեպքում նաև այլ փաստաթղթեր:

2.1.2. Վարկի տրամադրման ակցեպտը ուղարկելուց հետո նույն օրը Վարկը տրամադրվում է Վարկառուի վարկային հաշվին փոխանցելու միջոցով: Վարկի տրամադրման ամսաթիվ է հանդիսանում Վարկառուի վարկային հաշվին փոխանցված գումարի արտացոլման ամսաթիվը:

2.1.3. Բանկը Վարկը տրամադրում է Վարկառուին Գլխավոր վարկային պայմանագրի շրջանակներում, դրանով և Վարկային պայմանագրով սահմանված կարգով և պայմաններով:

2.1.4. Վարկային պայմանագրով Բանկը Վարկառուին տրամադրում է Վարկ, իսկ Վարկառուն պարտավորվում է Վարկային պայմանագրով սահմանված պայմաններով վերադարձնել Վարկը և տոկոսներ վճարել դրա դիմաց, վճարել Վարկավորման պայմաններով սահմանված այլ վճարումները և կատարել կնքվող Վարկային պայմանագրից բխող այլ պարտավորություններ:

2.1.5. Վարկի օգտագործման համար տոկոսների հաշվարկումը (կուտակումը) իրականացվում է յուրաքանչյուր օր՝ սկսած Վարկի տրամադրման օրվանից: Վարկի տոկոսագումարը հաշվարկվում է վարկի փաստացի մնացորդի նկատմամբ:

2.1.6. ***ԱՐՏԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ Է ՀԱՆԴԻՍԱՆՈՒՄ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՏՎՅԱԼ ՕՐՎԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՎԱՃԱՌՔԻ ՓՈԽԱՐԺԵՔԸ. Ընդ որում, արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ վարկի մարումների վրա:***

2.1.7. եթե Վարկային պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող վարկի մարման ժամանակցույցով նախատեսված վարկի մարման օրը շաբաթ կամ կիրակի է, ապա մարումը համապատասխանաբար կատարվում է այդ օրերին հաջորդող շաբաթվա առաջին աշխատանքային օրը, իսկ եթե մարման օրը ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ոչ աշխատանքային օր է, բացառությամբ սույն կետով նշված օրերի, ապա մարումը կատարվում է հաջորդող աշխատանքային օրը:

2.1.8. Պայմանագրից բխող վճարների (դրանց մի մասի), այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ Վարկի գումարի, տոկոսագումարի, այլ վճարների, վճարման կարգը մարման ժամանակացույցով սահմանված լինելու դեպքում, այն հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մաս, որը Վարկի տրամադրման ակցեպտի

հետ միասին սույն կանոններով նախատեսված կարգով ուղարկվում է Վարկառուին՝ իր էլեկտրոնային փոստի հասցեին:

2.1.9. Վարկառուին տրամադրված վարկի ժամկետայնության և տոկոսների հաշվարկման համար հիմք է ընդունվում տարին 365 օրացուցային օր սկզբունքը:

2.1.10. Վարկատուի նկատմամբ ունեցած վարկային պարտավորությունները կատարելիս մարումներն ընդունվում են հետևյալ հերթականությամբ. ա) գումարի բռնագանձման ուղղված ծախսեր, այդ թվում դատական ծախսեր (առկայության դեպքում), բ) տոկոսների տուժանք, գ) վարկի մայր գումարի տուժանք, դ) տոկոսներ, ե) սպասարկման վճար և միջնորդավճարներ /առկայության դեպքում/ և զ) վարկի գումար: Վարկատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխելու սույն կետում նշված մարումների հերթականությունը: Ընդ որում, Վարկային պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում ժամկետանց պարտավորությունների առկայության դեպքում առաջնահերթ մարումներն ընդունվում են ի կատարումն ժամկետանց պարտավորությունների, այնուհետ՝ սույն կետով նախատեսված կարգով՝ ժամանակացույցով նախատեսված վարկային պարտավորությունների մասով:

2.1.11. Վարկատուի պահանջը փաստացի բավարարման պահին ներառում է գույքի պահպանման և բռնագանձման հետ կապված ծախսերը, տուժանքն ու վնասները, սպասարկման վճարները և միջնորդավճարները, տոկոսագումարը, վարկի մայր գումարը:

2.1.12. Վարկի տոկոսադրույքը և սույն պայմանագրով նախատեսված պայմանները Վարկատուն կարող է միակողմանիորեն փոփոխել, այդ մասին Վարկառուին 7 (յոթ) աշխատանքային օր առաջ Վարկային պայմանագրով ընտրված եղանակով ծանուցելու միջոցով:

Ընդ որում, ԱԲՀՏ բաղադրիչով հաշվարկվող տոկոսադրույքի փոփոխության դեպքում, նշված կարգով համապատասխանաբար փոփոխվում են տոկոսադրույքի հաշվարկում տեղ գտած հաստատուն տոկոսադրույքի չափերը, օրինակ՝ եթե պայմանագրում սահմանված է վարկի տոկոսադրույքը առաջին 12 ամիսների համար՝ 12 տոկոս, որից հետո՝ ԱԲՀՏ գումարած 3 տոկոս, ապա տոկոսադրույքը 2 տոկոսով բարձրանալու դեպքում, տոկոսադրույքը կփոփոխվի և կսահմանվի առաջին 12 ամիսների համար ՝ 14 (12%+2%) տոկոս, որից հետո՝ ԱԲՀՏ գումարած 5 (3%+2%) տոկոս: **Տվյալ փոփոխության արդյունքում Վարկային պայմանագրով նախատեսված առավելագույն սահմանաչափը կարող է փոփոխվել:**

2.1.13. Վարկի և տոկոսագումարների մարման ժամանակացույցով սահմանված վճարները (դրանց մի մասը) Պայմանագրով սահմանված, Բանկի կողմից միակողմանի փոփոխվելու պարագայում Բանկը գրավոր /Վարկային պայմանագրով նախատեսված լինելու դեպքում էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով/ ծանուցում է Վարկառուին՝ կցելով փոփոխված մարման ժամանակացույցը և Վարկառուն անվերապահորեն պարտավորվում է համապատասխան վճարները կատարել համաձայն փոփոխված մարման ժամանակացույցի: Փոփոխված մարման ժամանակացույցը Վարկառուին ուղարկման պահից հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.1.14. Վարկի տրամադրման դիմում-օֆերտան ստորագրելու պահին Վարկառուն/Համավարկառուն (առկայության դեպքում) տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ Վարկատուն կարող է սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում առանց լրացուցիչ ծանուցման Վարկառուի /Համավարկառուի/ հաշիվներից անակցեպտ գանձել պարտքի չափին համապատասխան գումար: Տվյալ պարագայում, Վարկատուն անակցեպտ գանձումները կատարում է Վարկային պայմանագրով նախատեսված վարկի մարման ժամանակացույցով նախատեսված վճարումները կատարելու բանկային օրվա ավարտին:

Ընդ որում, անակցեպտ գանձվում է այն արժույթի հաշվից, որ արժույթով տրամադրվել է վարկը, իսկ դրանում միջոցների բացակայության դեպքում՝ այլ արժութային հաշվից Բանկի ընտրությամբ:

2.1.15. Կողմերը գիտակցում և ընդունում են, որ Վարկի տոկոսադրույքը սահմանվում է հաշվի առնելով Վարկառուի վարկունակությունը, պարտավորությունների պատշաճ կատարման նկատմամբ պատասխանատվությունը, և, որ վարկի մարման ժամանակացույցով սահմանված կարգով Վարկառուի կողմից հետևյալ վարքագիծ դրսևորելու դեպքում վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանիորեն բարձրանում է հետևյալ կարգով. 1-ին, 2-րդ և 3-րդ անգամ Վարկառուի կողմից 5օր և ավելի անընդմեջ վարկի մարման ժամանակացույցով վարկի մարումներ չկատարելու դեպքում Վարկի տարեկան տոկոսադրույքը յուրաքանչյուր անգամ բարձրանում է 1 /մեկ/ տոկոսային կետով, ինչպես նաև Վարկառուի կողմից Բանկում և/կամ այլ բանկերում և/կամ վարկային կազմակերպություններում սուբյեկտիվ դասակարգմամբ վարկային պարտավորություններ ունենալու դեպքում Բանկն իրավունք ունի վարկի տարեկան տոկոսադրույքը միակողմանիորեն բարձրացնել և սահմանել մինչև Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի կրկնապատիկի չափով: Վարկատուն ծանուցում է սույն կետում կատարված փոփոխության մասին Վարկառուին՝ փոփոխությունից հետո 7օրյա ժամկետում:

2.1.16. Վարկառուն ստորագրելով Վարկային գծի տրամադրման Դիմում-Օֆերտան տալիս է նաև իր համաձայնության առ այն, որ Վարկատուն իրավունք ունի դադարեցնել վարկային գծի չօգտագործված մասի օգտագործման Վարկառուի իրավունքը՝ դրա մասին /դադարեցման պահից/ 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տեղեկացնելով Վարկառուին, եթե

2.1.16.1. սույն պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ԱՄՆ դոլարի փոխարժեքի ավելի քան 5 (հինգ) տոկոսով տատանման և/կամ սույն պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված լոմբարդային ռեպո տոկոսադրույքի ավելի քան 3 (երեք) տոկոսով տատանման դեպքում,

2.1.16.2. Բանկի կողմից հրապարակված լողացող տոկոսադրույքի հիմքում օգտագործվող հրապարակային բազային տոկոսադրույքի՝ մեկ տարվա ընթացքում ավելի քան 2 (երկու) տոկոսային կետով տատանման դեպքում,

2.1.16.3. Սույն պայմանագրի կնքման պահի համեմատ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված ՌԴ ռուբլու փոխարժեքի ավելի քան 20 (տասը) տոկոսով տատանման դեպքում,

2.1.16.4. Սույն պայմանագրի կնքման պահի համեմատ միջազգային շուկայում նավթի (BRENT) և ոսկու հրապարակվող գների ավելի քան 20 (քսան) տոկոսով տատանման դեպքում,

2.1.16.5. ՀՀ բացասական ՀՆԱ հրապարակման դեպքում,

2.1.16.6. ՀՀ ԿԲ կողմից ՀՀ որևէ առևտրային բանկի լիցենզիայի հետ կանչման դեպքում,

2.1.16.7. ՀՀ գործազրկության հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով աճի դեպքում,

2.1.16.8. Արտերկրից ՀՀ կատարվող դրամական փոխանցումների հրապարակվող ցուցանիշի ավելի քան 10 (տասը) տոկոսով նվազման դեպքում,

2.1.16.9. ՀՀ կամ հարևան երկրում/տարածքներում պատերազմի հայտարարման կամ պատերազմական գործողությունների դեպքում,

2.1.16.10. ՀՀ կողմից արտակարգ դրության հայտարարման դեպքում,

2.1.16.11. ՀՀ-ում արտահերթ խորհրդարանական ընտրությունների նշանակման դեպքում,

2.1.16.12. Վարկառուին սնանկ ճանաչելու դիմում /հարկադիր կամ կամավոր/ ներկայացվելու դեպքում

2.1.16.13. Վարկառուի կողմից ինքնասնանկության հայտ ներկայացնելու դեպքում,

2.1.16.14. Որևէ քրեական գործում Վարկառուի որպես կասկածյալ կամ մեղադրյալ ներգրավվելու դեպքում և/կամ նրա նկատմամբ քրեական հետապնդում հայտարարված լինելու դեպքում,

2.1.16.15. Վարկառուի նկատմամբ 1 մլն ՀՀ դրամը գերազանցող գումարի բռնագանձման պահանջի բավարարման դեպքում

2.1.16.16. Վարկառուին ազատազրկման հետ կապված դատավճռի կայացման դեպքում դատական կարգով քրեական կամ քաղաքացիական օրենսգրքով մեղավոր ճանաչելու դեպքում՝ որի արդյունքում պահանջը կգերազանցի 1 մլն ՀՀ դրամը, կամ առկա կլինի ազատազրկման որոշում,

2.1.16.17. Փողերի լվացման տիպաբանություններով գործարքների իրականացման կամ փողերի լվացման ցուցակներում հայտնվելու դեպքում,

2.1.16.18. Ընդհանուր մակրոտնտեսական վիճակի վատթարացման դեպքում:

2.1.16.19. Վարկատուի կողմից իրականացվող մոնիթորինգի արդյունքների համաձայն՝ Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հայտնաբերման դեպքում,

2.1.16.20. Այն դեպքում, երբ Վարկատուին չի հաջողվում տվյալների թարմացման կամ այլ նպատակով Վարկառուի հետ կապ հաստատել հեռախոսակապի միջոցով՝ վերջինիս կողմից տրամադրված հեռախոսահամարով:

2.1.17. Վարկառուն նաև համաձայնվում է, որ սույն կետով նախատեսված պայմանների վերացումը չի կարող հիմք հանդիսանալ վարկային գծի չօգտագործված մասի օգտագործման Վարկառուի իրավունքը վերականգնելու համար, բացառությամբ 2.1.16.20. ենթակետով նախատեսված հիմքով վարկային գծի չօգտագործված մասի օգտագործման սահմանափակման դեպքի, երբ Վարկառուի կապի դուրս գալու արդյունքում ապահովվի վերջինիս տվյալների թարմացումը (այդ թվում՝ նոր գործող հեռախոսահամարի տրամադրումը) կամ այն նպատակի իրականացումը, ինչի համար Վարկատուն փորձել է կապ հաստատել Վարկառուի հետ,:

2.1.18. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն փոփոխելու Վարկի տարեկան անվանական տոկոսադրույքը /բարձրացնելով այն մինչև ՀՀ ԿԲ կողմից սահմանված բանկային տոկոսի կրկնապատիկը սույն կանոնների 2.1.16 կետով նախատեսված դեպքերում՝ Վարկառուին նախօրոք 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով /Վարկառուի կողմից ընտրված հաղորդակցման եղանակով/:

2.1.19. Վարկառուն հասկանում, գիտակցում և ընդունում է սույն պայմանագրի 2.1.16 և 2.1.17 կետերով վարկային գծի օգտագործման հնարավորության դադարեցման, ինչպես նաև վարկի տարեկան անվանական տոկոսադրույքի փոփոխության պայմանները և հետևանքները, ինչպես նաև դրանց կիրառման վերաբերյալ տալիս է իր անվերապահ համաձայնությունը:

2.1.20. Բանկը ցանկացած ժամանակ իրավունք ունի միակողմանիորեն փոխել Վարկի պայմանները, միջնորդավճարների կամ սպասարկման վճարների չափերը, այդ մասին Վարկառուին նախօրոք 7 (յոթ) աշխատանքային օր առաջ ծանուցելով /Վարկառուի կողմից ընտրված հաղորդակցման եղանակով/:

2.1.21. Վարկային գիծն արտարժույթով տրամադրվելու դեպքում Գծի սահմաններում օգտագործված գումարները Պայմանագրով նախատեսված ժամկետներում չմարելու դեպքում Բանկն իրավունք ունի գանձվելիք գումարի չափով արտարժույթ ելքագրել Վարկառուի՝ Բանկում գործող համապատասխան արտարժութային հաշվից/ներից/, իսկ դրանց վրա անհրաժեշտ միջոցների բացակայության դեպքում՝ նաև այլ արժույթով հաշիվներից, որի դեպքում արժույթների փոխարկումն իրականացվում է այդ պահին Բանկում գործող համապատասխան փոխարժեքով:

2.1.22. Վարկային գծի տրամադրման պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքը և Ընդհանուր ծախսը հաշվարկված են Պայմանագրի կնքման օրվա դրությամբ, կրում են կողմնորոշող բնույթ և կարող են Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխվել՝ կապված Օգտագործված գումարները և Տոկոսները Վարկառուի կողմից վճարման արտոնյալ ժամանակահատվածում մարելու, ինչպես նաև դրա հաշվարկում ներառված տարրերի փոփոխությունից:

2.2 Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավունք ունի՝

2.2.1. Պայմանագրի գործողության ընթացքում հսկողություն սահմանել Վարկառուի բոլոր հաշիվների և դրամական այլ միջոցների նկատմամբ:

2.2.2. Պայմանագրով նախատեսված մարման օրվա վերջում և հետագա ժամկետանց օրերին, Վարկատուի մոտ բացված Վարկառուի կամ Վարկառուի կողմից նշված երրորդ անձանց (վերջինիս գրավոր համաձայնության դեպքում) հաշիվներից կատարել վարկային պարտքի մարումներ՝ տվյալ օրվա դրությամբ Վարկատուի կողմից սահմանված փոխարժեքով:

2.2.3. Վարկառուի կողմից Պայմանագրի որևէ դրույթի խախտման, Պայմանագրով նախատեսված ժամկետներում Վարկառուի կողմից պարտավորությունները չկատարելու կամ մասնակի կատարելու, ինչպես նաև Վարկառուի ֆինանսական վիճակի վատթարացման հայտնաբերման դեպքում ձեռնարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված բոլոր անհրաժեշտ գործողությունները (հաշիվներից անակցեպտ բռնագանձում, գրավի առարկայի իրացում, հետագա վարկավորման դադարեցում, Վարկի ամբողջ գումարի վաղաժամկետ մարման պահանջի ներկայացում և այլն)՝ Վարկառուի պարտականությունների կատարումն ապահովելուհամար:

2.2.4. Վարկառուից պահանջել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը վարկի նպատակային օգտագործման, ֆինանսական վիճակի և վճարունակության վերաբերյալ:

2.2.5. Պայմանագրի գործողության ընթացքում պարբերաբար, իրականացնել Վարկառուի վերաբերյալ տեղեկատվության թարմացում, անհրաժեշտության դեպքում՝ վեցամսյա կամ իր կողմից որոշված այլ պարբերականությամբ, Վարկառուից պահանջել ներկայացնել համապատասխան փաստաթղթեր և տվյալներ:

2.2.6. Վարկառուի կողմից վարկային պարտավորությունները ժամանակին չկատարելու կամ մասնակի կատարելու դեպքում իր իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու անհրաժեշտությունից ելնելով՝ օրենքով սահմանված կարգով դատարանին տրամադրել Վարկառուի, Համավարկառուի, Երաշխավորների վարկային և այլ հաշիվների վերաբերյալ տեղեկություններ:

2.2.7. Վարկառուի և/կամ Համավարկառուի նկատմամբ ապահովագրական պատահար տեղի ունենալիս հատուցում ստանալ ապահովագրողից /կետը գործում է Վարկային պայմանագրով սահմանված ապահովագրության պահանջի դեպքում/:

2.2.8. Պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վարկային ռեգիստրին, «ԱՔՌԱ Քրեդիտ Ռեփորթինգ» Փակ Բաժնետիրական Ընկերության վարկային բյուրոյին և իրավասու այլ պետական և ոչ պետական մարմիններին տրամադրել և ստանալ Վարկառուի վարկային պարտավորությունների և վարկառուի վերաբերյալ այլ տեղեկություններ, վարկային զեկույց:

2.2.9. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԺԱՄԿԵՏՆԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ԿՈՂՄԻՑ ԻՐ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՈՉ ՊԱՏՇԱՃ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՎԱՐԿԱՏՈՒՆ 3 /ԵՐԵՔ/ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՎԱՐԿԱՌՈՒԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՅԴ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Է ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ:

2.2.10. Վարկառուից Պայմանագրի գործողության ընթացքում պահանջել տրամադրել լրացուցիչ փաստաթղթեր, այդ թվում բայց ոչ միայն, վարկունակության և վարկարժանության գնահատման համար Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված անհրաժեշտ փաստաթղթերը, և այլն,

2.2.11. Վարկային պայմանագրի հիման վրա իրեն պատկանող իրավունքը (պահանջը) առանց Վարկառուի համաձայնության գործարքով փոխանցել (զիջել) այլ անձի: Վարկառուն սույնով հավաստում է, որ սույն կանոնների կիրառմամբ վարկավորման դեպքում Վարկատուի անձն իր համար որևէ նշանակություն չունի,

2.2.12. Վարկառուից պահանջել Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարում,

2.2.13. Իր բացառիկ հայեցողությամբ գնահատել Վարկի նպատակային օգտագործումը,

2.2.14. Իրականացնել մոնիթորինգ՝ Վարկառուի վարկունակության աստիճանը, ինչպես նաև գրավի վիճակը պարզելու նպատակով,

2.2.15. Ամբողջությամբ կամ մասնակիորեն հրաժարվել Վարկ տրամադրելուց և (կամ) ներկայացնել վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջ, եթե տեղի են ունեցել փոփոխություններ կամ հայտնի են դարձել տվյալներ, որոնց առկայությունը Բանկի գնահատմամբ ազդում է վարկունակության վրա կամ կասկածի տակ է դնում վարկի հետագա սպասարկումը,

2.2.16. Կասեցնել վարկային գծի օգտագործման Վարկառուի իրավունքը՝ դրա մասին /կասեցման պահից/ 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ձևով տեղեկացնելով Վարկառուին, եթե առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտ վկայում են, որ Վարկառուին տրամադրված գումարը ժամկետում չի վերադարձվի և/կամ Վարկառուն ունի կետանցված պարտավորություններ և/կամ Վարկառուի գույքի վրա արգելանք է դրված,

2.2.17. Վերացնել կամ մասնակի վերացնել վարկային գծի օգտագործման Վարկառուի իրավունքի կասեցումը, եթե Վարկառուն Վարկատուին է ներկայացնում վարկային գծի սպասարկման հնարավորության վերաբերյալ՝ Վարկատուի համար ընդունելի, հիմնավոր ֆինանսական և այլ փաստաթղթեր, առկա չէ վճարման ենթակա Պարտքի գումար և Վարկառուն չունի կետանցված պարտավորություններ,

2.2.18. Իրականացնել Վարկային պայմանագրով և Գլխավոր վարկային պայմանագրով սահմանված այլ իրավունքներ:

2.3 Պայմանագրի գործողության ընթացքում Վարկատուն պարտավորվում է՝

2.3.1. Վարկի ձևակերպումներն իրականացնել Պայմանագրի պայմաններին համապատասխան, ժամանակին և սահմանված կարգով հաշվառում տանել վարկի շարժի, մարումների, տոկոսագումարների հաշվառման վերաբերյալ, Վարկառուի պահանջով տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ:

2.3.2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանել Պայմանագրի գաղտնիությունը:

2.4 Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուն իրավունք ունի՝

2.4.1. Իր նախաձեռնությամբ Պայմանագրի մասը հանդիսացող Վարկի և այլ վճարումների մարման ժամանակացույցով սահմանված ժամկետներից շուտ մասնակի կամ ամբողջությամբ մարել վարկը և դրա դիմաց հաշվարկված փաստացի տոկոսագումարը:

2.4.2. Վարկատուից ստանալ տեղեկանք վարկի շարժի մասին՝ Բանկի սակագներով սահմանված միջնորդավճարը վճարելու դեպքում, բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված Վարկառուին պարտադիր տրամադրման տեղեկատվության:

2.4.3. Առանց որևէ պատճառաբանության միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը՝ դրա կնքմանը հաջորդող 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում (մտածելու ժամանակ)՝ հետ վերադարձնելով իր ստացած վարկի գումարն ամբողջությամբ և վճարելով տոկոսներ, որոնք հաշվարկվում են Պայմանագրով նախատեսված տարեկան փաստացի տոկոսադրույքին համապատասխան: /կիրառելի է մինչև 15 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում/

2.4.4. Ցանկացած ժամանակ ժամկետից շուտ կատարելու (մարելու) Պայմանագրով ստանձնած պարտավորությունները: Այդ դեպքում, ինչպես նաև վաղաժամկետ մարման դեպքում համամասնորեն նվազեցվում է Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսը և Վարկառուի նկատմամբ չի կարող կիրառվել պատասխանատվության միջոցներ (տուժանք կամ Վարկառուի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոց): Վարկառուի վարկավորման ընդհանուր ծախսից համամասնորեն նվազեցման ենթակա են ապահովագրական վճարները, իսկ ենթակա չեն հետևյալ ծախսերը՝ հաշվի բացման, քարտի տարեկան

սպասարկման, հայտի ուսումնասիրման, վարկի տրամադրման միանվագ, վարկի կանխիկացման, վարկի սպասարկման ամսական վճարները: /կիրառելի է մինչև 15 մլն ՀՀ դրամ վարկերի դեպքում/

2.4.5. Վարկառուն և Համավարկառուն սույնով տալիս են իրենց համաձայնություն առ այն, որ միասին կամ առանձին կարող են դիմել Բանկին Վարկի մարման ժամանակցույցի փոփոխության /այդ թվում՝ Վճարման օրվա/ համար: Ընդ որում, վերջիններիցս մեկի կողմից նման դիմում ներկայացնելու դեպքում, մյուսը պարտավորվում է այդ մասին տեղեկացնել դրա մասին և տրամադրել փոփոխված բոլոր փաստաթղթերը և տեղեկատվությունը: Կողմերը համաձայնվում են, որ Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում վերջիններիս որևէ գործողության համար:

2.5 Պայմանագրի գործողության ընթացքում Վարկառուն պարտավորվում է՝

2.5.1. Վարկային պայմանագրին համապատասխան և նշված ժամկետներում վերադարձնել Վարկը և վճարել տոկոսները և վարկավորման պայմաններով սահմանված միջնորդավճարներն ու վճարման ենթակա այլ գումարները,

2.5.2. Չկատարել որևէ գործողություն՝ այդ թվում վարկային, երաշխիքային և այլ պարտավորությունների ստանձնում, որը կարող է բացասական ազդեցություն ունենալ Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման վրա:

2.5.3. Վարկի գործողության ընթացքում Վարկառուն առանց Բանկի նախնական գրավոր համաձայնության պարտավորվում է այլ բանկերից կամ վարկային կազմակերպություններից չստանձնել Բանկի ակցեպտով սահմանված չափը գերազանցող պարտավորություններ, հակառակ դեպքում Բանկն իրավունք ունի միակողմանիորեն բարձրացնել գործող վարկի տարեկան տոկոսադրույքը Բանկի ակցեպտում նշված չափով՝ այդ մասին նախապես առնվազն 10 աշխատանքային օր առաջ Վարկառուին ծանուցելով: Ընդ որում, ԱԲՀՏ բաղադրիչով հաշվարկվող տոկոսադրույքի փոփոխության դեպքում, նշված կարգով համապատասխանաբար փոփոխվում են տոկոսադրույքի հաշվարկում տեղ գտած հաստատուն տոկոսադրույքի չափերը, Իսկ նախատեսված առավելագույն սահմանաչափը կարող է փոփոխվել: /Կիրառելի է եթե Վարկի տրամադրման ակցեպտում առկա է նման պահանջ/

2.5.4. Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու դեպքում Բանկի պահանջով վերջինիս վճարել Վարկային պայմանագրով նախատեսված տուժանքը (տույժ և տուգանք) և դրամական պարտավորությունների խախտման համար տոկոսները,

2.5.5. Վարկն օգտագործել բացառապես Վարկային պայմանագրով սահմանված նպատակներով,

2.5.6. անմիջապես տեղեկացնել Բանկին Վարկային պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների ցանկացած խախտման, ինչպես նաև հանգամանքների էական փոփոխությունների մասին,

2.5.7. Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները վաղաժամկետ կատարելու մասին գրավոր պահանջն ստանալուց հետո սահմանված կարգով և ժամկետում վաղաժամկետ ու ամբողջությամբ կատարել պարտավորությունները,

2.5.8. Իրականացնել Վարկային պայմանագրով սահմանված այլ պարտավորությունները:

2.5.9. Բոլոր այն դեպքերում, երբ Բանկի կողմից Պայմանագրին համապատասխան միակողմանիորեն փոփոխվում է որևէ պայման, իսկ Վարկառուն համաձայն չէ փոփոխված պայմանին, վերջինս իրավունք ունի վաղաժամկետ մարել (վերադարձնել) Վարկը, սպառողական վարկի դեպքում՝ առանց տուգանքների:

2.5.10. Վարկառուն իրավունք չունի Պայմանագրերով ստանձնած պարտքը կամ դրա մի մասն այլ անձի փոխանցելու առանց Բանկի գրավոր համաձայնության:

2.6 Վարկի տրամադրման մերժում, վարկային պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջ և տոկոսադրույքի միակողմանի փոփոխում.

2.6.1. Բանկն իր հայեցողությամբ կարող է պահանջել պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում (այդ թվում, բայց ոչ միայն, տոկոսները, տուժանքը (տույժ և տուգանք), մերժել վարկի տրամադրումը, ինչպես նաև, միակողմանիորեն փոփոխել Վարկի տոկոսադրույքը, եթե՝

2.6.2. Վարկառուն չի կատարել կամ անպատշաճ է կատարել Վարկային պայմանագրից բխող պարտավորությունները, ներառյալ, բայց չսահմանափակելով սահմանված ժամկետում չի վերադարձնում Վարկի գումարը և(կամ) չի վճարում Տոկոսները, սպասարկման վճարները, տուժանքը և(կամ) այդ կետանցները/ուշացումները կրում են պարբերական բնույթ, կամ Բանկի ծանուցման պահանջները կամ օրենքով սահմանված ցանկացած այլ պարտավորություն, կամ

2.6.3. Առկա է որևէ դատական կամ իրավական այլ գործընթացը կամ իրադրության այլ փոփոխությունը հիմք է տալիս կասկածելու, որ Վարկառուն ի վիճակի կլինի ժամանակին վճարել Բանկին ունեցած պարտքերը, կամ

2.6.4. Վարկառուի գույքը կամ դրա մի զգալի մասը անհատույց կամ իր համար էականորեն ոչ շահավետ պայմաններով փոխանցվել են կամ հնարավոր է, որ կփոխանցվեն երրորդ անձանց, կամ

2.6.5. Վարկառուի գույքի կամ դրա մի զգալի մասի վրա օրենքով սահմանված կարգով կալանք կամ արգելանք է դրվել կամ հնարավոր է, որ կդրվի, կամ

2.6.6. դատարանը Վարկառուին ճանաչել է սնանկ (անվճարունակ) կամ նրա նկատմամբ սկսվել է սնանկության վարույթ, կամ

2.6.7. Վարկառուն կետանցված պարտավորություններ ունի Բանկի, այլ ֆինանսական հաստատությունների (այլ բանկեր, վարկային կազմակերպություններ, ապահովագրական ընկերություններ և այլն), պետական կամ համայնքային բյուջեների հանդեպ, կամ

2.6.8. Վարկառուի ֆինանսական վիճակը վատթարացել է կամ առկա են նման միտումներ, կամ առկա են այնպիսի հանգամանքներ, որոնք ակնհայտորեն վկայում են, որ Վարկը սահմանված ժամկետում չի վերադարձվի (այդ թվում՝ սնանկության նախադրյալներ), կամ

2.6.9. Վարկառուի դեմ հարուցվել են քաղաքացիական, քրեական կամ վարչական գործեր, վարչական և այլ վարույթներ, կամ

2.6.10. Հայտնաբերվել է, որ Վարկառուն Բանկին տրամադրել է խեղաթյուր, կեղծ, շինծու, մոլորեցնող կամ անարժանահավատ տեղեկություններ կամ փաստաթղթեր, կամ թաքցրել է Վարկը տրամադրելու համար էական նշանակություն ունեցող տեղեկություններ կամ Բանկին չի տեղեկացրել հանգամանքների էական փոփոխությունների մասին, կամ չի ներկայացնում/ներկայացրել Պայմանագրով նախատեսված տեղեկատվությունը (փաստաթղթեր, հաշվետվություններ) կամ խախտել է դրանց ներկայացման ժամկետը, կամ

2.6.11. Վարկառուն խախտել է Բանկի հետ կնքած այլ գործարքներից ծագած ֆինանսական պարտավորությունները, կամ

2.6.12. Ստացված տեղեկատվության համաձայն՝ Վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող աշխատավարձը կամ դրան հավասարեցված այլ վճարները այլևս չեն փոխանցվում կամ չեն փոխանցվելու Բանկում սպասարկվող Վարկառուի բանկային, այդ թվում՝ քարտային հաշվին, կամ

2.6.13. Ֆինանսավորման, վերաֆինանսավորման ներկայացված վարկը չի ֆինանսավորվել կամ ֆինանսավորումը դադարեցվել է, կամ

2.6.14. Բանկի գնահատմամբ Վարկառուն Վարկն օգտագործել է ոչ նպատակային, կամ

2.6.15. Վարկառուն խոչընդոտել է Բանկի ներկայացուցիչների կողմից իրականացվող ստուգումներին կամ չի ապահովել Վարկի նպատակային օգտագործման նկատմամբ վերահսկողության հնարավորությունը, կամ

2.6.16. Առկա են Վարկային պայմանագրով և (կամ) ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հիմքեր:

2.6.17. Վարկավորման կանոնների 2.6.1 կետում նշված Վարկառուի և/կամ Ապահովում տրամադրած անձի կողմից թույլ տրված ցանկացած խախտում կամ հանգամանքների որևէ փոփոխություն Բանկի համար ճանաչվում են էական:

2.6.18. Վարկավորման կանոնների 2.6.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու պահից Բանկն իրավունք ունի պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում պահանջել Վարկառուից, մերժել Վարկի կամ դրա մի մասի տրամադրումը, ինչպես նաև, փոփոխել Վարկի տոկոսադրույքը անկախ նրանից, համապատասխան գործողությունը կատարելու պահին թույլ տրված խախտումները վերացվել են, թե ոչ:

2.6.19. Պարտավորությունների վաղաժամկետ կատարման պահանջի ներկայացումը, վարկի տրամադրումը մերժելը կամ տոկոսադրույքի փոփոխությունը Բանկին չի զրկում համապատասխան խախտման համար Վարկառուի նկատմամբ Վարկային պայմանագրով և/կամ սույն կանոններով նախատեսված պատասխանատվության որևէ միջոց կիրառելու իրավունքից:

2.6.20. Վարկավորման կանոնների 2.6.1 կետում նշված հանգամանքներն ի հայտ գալու դեպքում Բանկը, Վարկի վաղաժամկետ մարման պահանջ ներկայացնելու իր իրավունքից օգտվելու դեպքում, գրավոր ծանուցում է Վարկառուին՝ Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարման (ներառյալ տոկոսների և տուժանք (տույժերի և տուգանքների վճարումը)) մասին:

2.6.21. Սույն կանոններով և/կամ Վարկային պայմանագրով Բանկի վճարման պահանջը Վարկառուի կողմից չկատարվելու կամ մասնակի կատարելու դեպքում բոլոր վճարները համարվում են ժամկետանց, իսկ պարտավորությունը՝ խախտված, և Վարկառուն դրանց չկատարման համար պատասխանատվություն է կրում Վարկային պայմանագրով և/կամ սույն կանոններով նախատեսված կարգով, պայմաններով ու չափերով:

2.6.22. Եթե Բանկը Վարկառուից պահանջում է պարտավորությունների վաղաժամկետ և ամբողջական կատարում, ապա Բանկն իրավունք է ձեռք բերում անակնկալ կարգով, առանց Վարկառուի լրացուցիչ համաձայնության, գանձել պարտքի գումարը Բանկում գտնվող նրա բոլոր բանկային հաշիվներում առկա դրամական միջոցներից՝ պահպանելով սույն կանոններով նախատեսված հերթականությունը:

3. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

3.1 Վարկառուն գիտակցում է, որ վարկը տրամադրվելու է գրավադրման և/կամ երաշխավորության պայմանով Ապահովման միջոցի պայմանագրի հիման վրա:

3.2 Գլխավոր պայմանգրի ապահովման միջոց հանդիսացող Անշարժ գույքի գրավի դեպքում գործում են հետևյալ պայմանները.

3.2.1. Գրավի առարկան չի անցնում Գրավառուի տիրապետմանը և մնում է Գրավատուի տիրապետման և կառավարման ներքո:

3.2.2. Վարկառուի կողմից իր պարտավորությունները չկատարելու դեպքում Վարկատուն իրավունք ունի, ինչպես դատական, այնպես էլ առանց դատարան դիմելու՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածով և կնքված գրավի պայմանագրով սահմանված կարգով բռնագանձում տարածել և իրացնել գրավի առարկան:

3.2.3. Անշարժ գույքը առանց դատարան դիմելու եղանակով իրացնելու դեպքում բռնագանձման հետ կապած ծախսերը մոտավոր կկազմեն 45,000 ՀՀ դրամ՝ անշարժ գույքի նկատմամբ Բանկի՝ որպես նոր սեփականատիրոջ, իրավունքների պետական գրանցման համար, Անշարժ գույքը ուղղակի վաճառքի միջոցով իրացնելու դեպքում նաև 20,000 ՀՀ դրամ՝ իրացման պայմանագրի նոտարական կարգով

վավերացման վճար, իսկ հրապարակային սակարկությունների միջոցով իրացվելու դեպքում՝ նաև սակարկությունների կազմակերպչի կողմից սահմանված միջնորդավճարը:

3.2.4. Անշարժ գույքը դատական կարգով բռնագանձելու արդյունքում հարկադիր էլեկտրոնային աճուրդի միջոցով իրացվելու դեպքում դրա իրացման արժեքից նվազեցվում է կատարողական ծախսը, իսկ իրացման գինը պարտավորության մնացորդը գերազանցելու դեպքում նվազեցվում է նաև ՀՀ Հարկային օրենսգրքով սահմանված եկամտային հարկը:

4. «ՎԱՐԿԱՅԻՆ ԴԱԴԱՐ» ԾՐԱԳԻՐ

4.1 Վարկառուն սույնով ընդունում և գիտակցում է, որ «Վարկային դադար» ծրագիրը իրավունք է տալիս իրեն՝

4.2.1. հետաձգել (բաց թողնել) Վարկի մարման ժամանակացույցով նախատեսված հերթական վճարումը տարին մեկ անգամ, սակայն ոչ ավել, քան երեք անգամ Վարկի գործողության ողջ ընթացքում.

4.2.2. երկարաձգել Վարկի ժամկետը մինչև 6 /վեց/ ամիս ժամկետով մեկ անգամ Վարկի գործողության ողջ ընթացքում.

4.2 Վարկառուն կարող է օգտվել հերթական վճարման հետաձգման հնարավորությունից Վարկի տրամադրման պահից առնվազն 6 ամիս հետո, իսկ Վարկի ժամկետի երկարաձգման հնարավորությունից՝ առնվազն 12 ամիս հետո:

4.3 Վարկառուն կարող է օգտվել Վարկի ժամկետի երկարաձգման հնարավորությունից, եթե Բանկի հետ կնքել է Գլխավոր վարկային պայմանագիր, որի բաղկացուցիչ և անբաժանելի մասն է հանդիսանում Պայմանագիրը: Ընդ որում Վարկի ժամկետը կարող է երկարաձգվել առավելագույնը մինչև Գլխավոր վարկային պայմանագրի գործողության ժամկետի ավարտը:

4.4 Վարկառուն չի կարող օգտվել «Վարկային դադար» ծրագրից Վարկի մարման վերջնաժամկետին նախորդող մեկ ամսվա ընթացքում:

4.5 Պայմանագրով սահմանված պայմաններին համապատասխանելու դեպքում «Վարկային դադար» ծրագրից օգտվելու համար Վարկառուն Բանկ է ներկայացնում դիմում:

4.6 Վարկառուն գիտակցում և ընդունում է, որ Ծրագրից օգտվելու դիմումի ներկայացման պահին Վարկառուն չպետք է ունենա գործող ժամկետանց և ստանդարտ դասից տարբերվող դասակարգում ունեցող վարկային պարտավորություններ (վարկ, վարկային գիծ, օվերդրաֆտ, տրված երաշխավորություն և այլն), իսկ դիմումի ներկայացման օրվան նախորդող 12 ամսվա ընթացքում չպետք է ունենա ժամկետանց վարկային պարտավորությունների գծով հանրագումարային 30 օրը գերազանցող, իսկ հաջորդական՝ 15 օրը գերազանցող ուշացում:

4.7 Հերթական վճարման հետաձգման դեպքում գումարը (վարկի գումարը, տոկոսագումարը և այլ վճարները), որի վճարումը հետաձգվել է, իսկ Վարկի ժամկետի երկարաձգման դեպքում՝ վարկի մնացորդը և կուտակված տոկոսագումարներն ու այլ վճարները բաշխվում են Վարկի մնացած ժամկետի վրա:

4.8 Վարկառուն գիտակցում և ընդունում է, որ «Վարկային դադար» ծրագրից օգտվելը և 4.7 կետով սահմանված գործողությունները պարտադիր հանգեցնելու են Վարկային պայմանագրի անբաժանելի մասն հանդիսացող վճարման ժամանակացույցի փոփոխության, և Վարկառուն պարտավորվում է փոփոխության դեպքում Վարկի մարումները կատարել փոփոխված ժամանակացույցին համապատասխան:

4.9 Վարկառուն տալիս է իր անվերապահ համաձայնությունն առ այն, որ փոփոխված ժամանակացույցն իրեն ուղարկվի Պայմանագրում նշված կամ Վարկառուի կողմից Բանկին տրամադրված էլեկտրոնային փոստին, ինչը համարվում է Վարկառուի կողմից ներկայացված դիմումի հաստատում/ակցեպտավորում Բանկի կողմից: Վարկառուն գիտակցում, ընդունում և հավաստում է, որ Պայմանագիրը համարվում է փոփոխված՝ համաձայն ժամանակացույցի, վերջինս Վարկառուի էլեկտրոնային փոստին ուղարկելու պահից:

5. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Վարկառուի կողմից Վարկը և Տոկոսագումարը մասնակի կամ ամբողջությամբ մարելու (վերադարձնելու) ժամկետները կամ Վարկային պայմանագրից բխող պարտավորությունները խախտելու դեպքում հաշվարկվում են տոկոսներ և/կամ տուժանքներ՝ Վարկային պայմանագրով նախատեսված չափով, մինչև ժամկետանց պարտավորության մարումը:

5.2 Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում կիրառվող տույժերը և տուգանքները սահմանվում են Վարկավորման պայմաններով:

5.3 Վարկառուն պատասխանատվություն է կրում Բանկից թաքցված, Բանկին ներկայացված անարժանահավատ կամ կեղծ կամ շինծու կամ խեղաթյուրված տեղեկությունների համար՝ Վարկի գումարի 1 /մեկ/ տոկոսի չափով:

5.4 Տուժանքի (տուգանք և տույժ) և տոկոսների վճարումը Վարկառուին չի ազատում իր ստանձնած պարտավորությունները կատարելուց, ինչպես նաև չի կարող որևէ կերպ սահմանափակել պարտավորությունների վաղաժամկետ կատարում պահանջելու Բանկի իրավունքը:

5.5 Վարկառուն պատասխանատու է ՀՀ օրենսդրությամբ և Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար անկախ մեղքի բացակայությունից և (կամ) անհաղթահարելի ուժի՝ արտակարգ և անկանխելի հանգամանքների ազդեցությունից: Բանկի գրավոր համաձայնությամբ Վարկային պայմանագրով սահմանված համապատասխան ժամկետները կարող են երկարաձգվել անհաղթահարելի ուժի ազդեցության ժամանակահատվածով:Վարկառուն կարող է ազատվել բացառապես տույժերի և տուգանքների վճարման պարտավորությունից, սակայն ոչ Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարումից:

5.6 Պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Վարկառուն պարտավորվում է Բանկին փոխհատուցել բոլոր տեսակի լրացուցիչ ծախսերը, որոնք կկատարվեն Բանկի կողմից:

5.7 Պայմանագրով սահմանված տուժանքի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած բանկային տոկոսի հաշվարկային դրույքի քառապատիկը, եթե օրենքով այլ բան սահմանված չէ: Պայմանագրով սահմանված բոլոր տուժանքների հանրագումարի չափը չի կարող գերազանցել տվյալ պահին առկա պարտքի հիմնական գումարը:

6. ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄ

6.1 Վարկային պայմանագրով պահանջվող կամ նախատեսվող ցանկացած պահանջ, ծանուցում կամ այլ հաղորդում, որը չի ենթադրում ՀՀ օրենսդրությամբ պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվության հաղորդում, Բանկի կողմից մյուս կողմին ուղարկվում է Բանկի հայեցողությամբ՝ ցրիչի կամ փոստային առաքման միջոցով, էլեկտրոնային փոստի միջոցով կամ կարճ հաղորդագրությամբ (SMS) ՝ համապատասխան կապի միջոցի ՝ Բանկին հայտնի վերջին տվյալներով, կամ տրամադրվում է Բանկի տարածքում կամ հրապարակում է Բանկի պաշտոնական կայքէջում:

6.2 ՀՀ օրենսդրությամբ սահմանված Վարկառուին պարտադիր ներկայացման ենթակա տեղեկատվությունը, այդ թվում պարտադիր ներկայացման ենթակա քաղվածքները Վարկառուին տրամադրվում են Վարկային պայմանագրով Վարկառուի կողմից նախընտրած եղանակով՝ համապատասխան կապի միջոցի՝ Բանկին հայտնի վերջին տվյալներով:

6.3 Վարկառուն պարտավոր է անմիջապես գրավոր տեղեկացնել Բանկին իր տվյալների փոփոխությունների մասին: Փոփոխությունների մասին Բանկին չտեղեկացնելու բոլոր իրավական հետևանքների ռիսկը կրում է Վարկառուն:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

7.1. Վարկային պայմանագրի շուրջ ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են ՀՀ դատական համակարգի միջոցով ՀՀ օրենսդրության համաձայն, եթե կողմերի միջև ձեռք չի բերվել վեճերը արբիտրաժի միջոցով լուծելու համաձայնությունը

7.2. Այն ինչ նախատեսված չէ Վարկային պայմանագրով կամ սույն կանոններով կարգավորում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

7.3. Սույնով կողմերը, օգտվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 297-րդ 2-րդ մասով նախատեսված իրենց իրավունքից, համաձայնվում են, որպեսզի Վարկային պայմանագրից բխող բոլոր (անկախ գումարի չափից) վեճերի քննությունն իրականացվի պարզեցված վարույթի կարգով:

7.4. Վարկառուն ստորագրելով Վարկի դիմում-օֆերտան հավաստիացնում է, որ տեղյակ է պարզեցված վարույթի առանձնահատկությունների մասին, իսկ սույն կետով նախատեսված համաձայնությունը բխում է իր շահերից:

7.5. Վարկային պայմանագրից բխող պահանջները կարող են ներկայացվել Ֆինանսական Համակարգի Հաշտարարին, որը Կողմերի միջև ծագած վեճը լուծում է ՀՀ «Ֆինանսական Համակարգի Հաշտարարի մասին» օրենքով սահմանված կարգով: Ընդ որում, եթե գույքային պահանջի չափը չի գերազանցում 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ դրան համարժեք արտարժույթը, ապա ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները չեն կարող վիճարկվել Բանկի կողմից:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Վարկային պայմանագրերը ուժի մեջ են մտնում կնքման պահից և գործում են մինչև Վարկառուի կողմից Վարկային պայմանագրից բխող պարտավորությունների ամբողջական կատարումը:

8.2 Բանկի աշխատակիցները սույն կանոններով սահմանված կարգով վարկ ստանալու դեպքում, գործում են նաև Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված պայմանները:

8.3 Սույն Կանոնները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում և կարող են պարբերաբար Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել, փոփոխված Կանոնները հրապարակման պահից, եթե Բանկի կողմից փոփոխություններն ուժի մեջ մտնելու առավել ուշ ժամկետներ չեն սահմանվում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և(կամ) լրացումներ կարող են կատարվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ, բացառությամբ Վարկային պայմանագրով և (կամ) սույն կանոններով նախատեսված դեպքերի:

8.5 Սույն կանոնների պայմանների փոփոխությունների մասին Բանկը ծանուցում է Վարկառուին՝ օրենքով և Վարկային պայմանագրով սահմանված կարգով: Վարկառուն իրավունք ունի հրաժարվել նշված փոփոխություններից և լրացումներից մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ լուծելով Բանկի հետ կնքած Վարկային պայմանագիրը և ամբողջությամբ կատարելով ստանձնած պարտավորությունները: Եթե Վարկառուն մինչև փոփոխությունների ու լրացումների ուժի մեջ մտնելը չի լուծել Բանկի հետ կնքած Վարկային պայմանագիրը և կատարել է Վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները, ապա կատարված փոփոխություններն ու լրացումները լրիվ և ամբողջական ծավալով տարածվում են Վարկային պայմանագրից ծագած հարաբերությունների նկատմամբ, եթե Բանկի կողմից այլ բան չի սահմանվում:

8.6 Կնքելով վարկային պայմանագիր Վարկառուն տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ սպասարկման պատշաճ ապահովման և անվտանգության նկատառումներից ելնելով, իրականացնելու իրենց միջև կատարվող հեռախոսազանգերի ձայնագրություն: Տվյալ ձայնագրությունները ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

8.7 Կնքելով վարկային պայմանագիր Վարկառուն տալիս է Բանկին իր համաձայնությունը՝ Բանկի տարածքում Վարկառուին սպասարկելիս իրականացնել տեսաձայնագրություններ և ձայնագրումներ: Տվյալ ձայնագրությունները /տեսաձայնագրությունները/ ունեն ապացուցողական ուժ և միմյանց միջև վեճերի ծագման դեպքում օգտագործվում են որպես թույլատրելի և պատշաճ ապացույց:

8.8 Սույն կանոնների և Վարկային պայմանագրի միջև հակասությունների դեպքում նախապատվությունը տրվում է սույն կանոններին, եթե կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ այլ բան չի որոշվել: